

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 1/16

ք.Երևան

12 հունվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով լրացուցիչ հաշվարկված պարտավորությունները վերահաշվարկելու վերաբերյալ Ա/Ձ Վիգեն Հովհաննիսյանի (ՀՎՀՀ 27936131) դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Ա/Ձ Վիգեն Հովհաննիսյանը (այսուհետ նաև՝ բողոքաբեր) հայտնում է, որ 03.03.2019թ.-ին «Հսկիչ դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ից գնել է նոր սերնդի ՀԴՄ ապառիկ տարբերակով: ՀԴՄ-ի արժեքը եղել է 60.000 դրամ, որից 10.000 դրամը բողոքաբերը վճարել է որպես կանխավճար: Սահմանված տույժի մասին տեղյակ չլինելով Ա/Ձ Վիգեն Հովհաննիսյանը ամսական վճարումները կատարել է 3 ամիսը մեկ անգամ՝ վճարելով 3 ամսվա գումարը: ՀԴՄ-ի գծով բողոքաբերը ունի 31.170 դրամ պարտավորություն և հաշվարկված տույժ՝ 43.520 դրամ:

Բողոքաբերը խնդրում է վերանայել ստեղծված իրավիճակը և վերահաշվարկել հաշվարկված մայր գումարը և տույժերը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե բացակայում է հարկային մարմնի կողմից բողոքարկվող անհատական իրավական ակտի, գործողության կամ անգործության դեպքը:

Տվյալ դեպքում բացակայում է հարկային մարմնի ընդունած անհատական իրավական ակտի, ինչպես նաև հարկային ծառայողի գործողության կամ անգործության դեպքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Վիգեն Հովհաննիսյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Վիգեն Հովհաննիսյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:
Սույն որոշմանը չհամաձայնելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչապետի դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



ՌԱՖԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ